


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ
Պուլկարիոյ համար
Տարեկան ֆրք 10
Վեցամսեայ " 5
ԿԱՆԻՒԿ

20
ՅԱՆՎԱՐ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ
Արտասահման
Տարեկան ֆրք 12
Վեցամսեայ " 6
ԿԱՆԻՒԿ

20
ՍԱՆՎԱՐ

ՀԱՆՂԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

Կը հրահարակուի ճարար օրերը : Մա-
նուցման տողը 10 Սանդիս : Երկու քիւ ա-
ռաջ հրահարակուած քերքը 40 Սանդիս :
Չհրահարակուած գրուքիւնը եւ յարուիր :

Հասցէ
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

ԱԶԳԱՅԻՆ — Մեր հրատարակել խոս-
տացած երեք զուարճալի դէպքերու հաւա-
քածոյին Ա. մասը կազմող «ՓԻՆԻԿ ԱՂԲՕՐ»
ՀԱՐՄԱՆԻՔԻՆ տպագրութիւնը աւարտած
ըլլալով, կը խնդրենք մեր պատ. բաժանորդ-
ներէն որ իրենց տոմսակները Տ. Ա. Զարպ-
հանէլեանի գրաստունը ներկայացնելով, ըն-
դունին նոյն առաջին մասը : Միւս երկու մա-
սերն ալ մամուլ տակ են և քիչ ատենէն պի-
տի յանձնուին :

ԱԶԳԱՅԻՆ

Հիւրմիւլեան Տ. Գէորգ քահանան
նամակ մը ուղղելով խմբագրութեանս,
կը բողոքէ թաւ. խորհրդոյ կողմէ իր
մասին տրուած վերջին որոշմանը դէմ :
Մենք այդ նամակը այն ատեն պիտի
կրնայինք հրատարակել, երբ քահանա-
յական սքեմ կրող անձի անվայել լեզ-
ւով մը խմբագրուած չըլլար :

Երբ խաղաղութեան պաշտօնեայ մը
կը խոստովանի թէ ինքը կիրքոտ բնա-
ւորութիւն մը ունի, ինչպէս պիտի կըր-
նայ պաշտօնավարել խաղաղութեան այն
սրբազան տաճարին մէջ : Ու միթէ քիչ

մ'ալ այդ բնաւորութեանը համար չէ՞ր
որ մինչեւ ցարդ այցելած տեղերու ե-
կեղեցիներուն մէջ (Պրուսա, Եգիպտոս,
Աթէնք, Վառնա) չկրցաւ տեւականապէս
պաշտօնավարել :

Անցեալ շաբթու ծանուցինք թէ
Տիար Կ. Յովասափեան որոշած է հարիւր
չքաւոյ դաղթականաց ճամբու ծախքը
վճարելով զանոնք վերադարձնել ի Պո-
լիս. այժմ կը տեղեկանանք թէ վերադար-
ձողներուն թիւը յանդած է 194ի, և
անոնց ճամբու ծախքը հայթայթուած
է այն 30 ոսկիով, զոր հանդանակած է
Մանչէսթրի աթանքնախի հովիւ Արթ.
Տ. Թէոդորոս հայր Տ. Իսահակեան, ո-
րուն կարեկցութեանը դիմում ըրած է
նախապէս Տիար Յովասափեան, անոր
նկարագրելով տեղւոյս դաղթականաց
թշուառ վիճակը :

ԱԶԳԱՅԻՆ — Որովհետեւ միտք ունիմ
Վառնաէն հեռանալու, կը խնդրեմ որ
ինձ գրաւ դրած իրերի ստակը ետ վը-
ճարեն շուտով, եթէ ոչ պէտք է ծախեմ :
Ա. ԱՄԻՐԻՆԵՆԵԱՆՑ

Երուսաղէմէն եկած մասնաւոր նա-
մակէ մը հետեւեալ հետաքրքրական տե-
ղեկութիւնները կը քաղենք .

«Հաճի զարնել տալու ձեռք կամ
նկարը ամեն ազգաց համար զատ զատ
են , և մասնաւորապէս մեր աշգին հա-
մար՝ գողցես ճաշակի խնդիր դարձած
է :

Կը կարծուի թէ սաղիմական ուխ-
տաւորները հաճախեցին ուսկզբունքը ծա-
գած է եսայի մարգարէին « Ի վերայ
բազկաց իմոյ նկարեցից զքեզ Երուսա-
ղէմ » պատգամէն :

« Եւրոպացիները՝ Խաչակրութեան
ժամանակէն մնացած + այս ձեռն ունին
գերմանական բրէնս մը գեռ շատ չը-
նէր Երուսաղէմ գալով՝ աջ ձեռքին վը-
րայ հինգ Խաչ շինել տուած է , որ կըս-
ուի թէ Երուսաղէմայ հին կնիքն է :
Հատինները , Ռուս ուխտաւորներէն ու
մանք , Ամերիկացի նաւաշները և առ
հասարակ զբօսաշրջիկները՝ աջ թեւեր-
նուն վրայ Երուսաղէմ գրել կուտան
կողմնակի ձևով : Յոյները Ս . Գէորգի
պատկերը կը շինեն , Ղպտի , Ասորի եւ
Հապէշ ուխտաւորք ալ բազումներնուն
վրայ Ս . Յարութեան նկարը ծեծել կու-
տան . իսկ Հայ ուխտաւորները՝ աջ թե-
ւին վրայ Ս . ՅԱՐՈՒԹԻՒՆ և ձախ բազ-
կին վրայ՝ Ս . ԳԼԽԱԻԹ ԾԵԾԵԼ կուտան :

« Զի մոռնանք յիշելու թէ , աջ
ձեռքը շատ գործածական ըլլալուն , հա-
ճի ծեծուած ատեն , շատ չի ցաւի , իսկ
ձախ բազուկը՝ նուազ գործածուելուն ,
կը ցաւի ասեղով ծեծուած ատեն : »

Պուկարիոյ հայաշատ քաղաքներէն
մէկուն մէջ պարոն մը տէնօռի « ճեր-
մակ թուղթ » մը ներկայացուցեր է ե-
րիտասարդի մը , կուսակցական հակակ-
րանքէ դրդուած :

Կաղդարարենք այդ « ճերմակ

թուղթ »-ի տէնօռին , որ ազատ ու միան-
գամայն այս հիւրասէր երկրին մէջ տե-
ղի չի տայ խժժութիւններու , որուն
հանդամանքներն ու պարագաները կըր-
նան ծանշ հետեւանքներ աւաջ բերել և
արդելքներ յարուցանել հայ ժողովուր-
դին հանդիստ կեանքին դէմ . պէտք է
գիտնայ այդ պարոնը թէ իր պաշտօնը
թշնամի երկրի մէջ աւելի յաշգի է
քան թէ՛ ալատ երկրի մէջ :

Չենք գիտեր թէ եղբայրասպան ու
թիւնը քանի՜ տնտէկ կըլլայ : Այս կերպ
յուր գրութիւններ չեն որ ժողովուր-
դը զղուեցուցին ու յուսահատեցուցին ,
և յեղափոխութեան վեհանունը խաղա-
լիկ դարձաւ անգիտակից մարդոց ձեռ-
քին մէջ :

Ժամանակը մեղմէ բախտախնդրու-
թիւն չի պահանջեր , այլ մաքուր ալ-
գասիլութիւն :

Կը լսենք թէ գաղթական երեք
բաշեծաղիկ օրիորդներ գիշերները շատ
անգամ մինչև ժամը 2 թեւ թեւի մտած ,
քաղաքապետութեան պարտեզին անշուք
ճամբաներուն մէջ ամէն աշգի երիտա-
սարդներ ու հետ ՏԵՆԱՆՈՒԻՆՔՆԵՐ կը սար-
քեն եղբր : Եթէ՛ այդ օրիորդները իրենց
նոյն անպատկառ ընթացքը շարունա-
կեն , թերեւ օր մը փորձանքի ալ հան-
գալին , վասն զի , երիտասարդները , ա-
մեն ատեն , (իրենց հասկցած լեզուով
ըսենք) պոյ խայցնող ուհիներու հան-
դէպ աւելի կը համարձակին անպատ-
ուաբեր ընթացքներու գիմելու , իսկ ի-
րենց պատիւը ճանչցող պաշկեշտ օրի-
որդներուն շատ քիչ կը յանդգնին ծուռ
աչքով մը նայելու , ու այն ալ ամեն
ատեն չէ :

Սա ալ չի մոռնանք ըսելու թէ , ա-
մեն պարագայի մէջ այդ երեք օրիորդ-
ներուն ծնողքներն ալ պատասխանատու
են , որ սանձարցակ ձիերու պէս զաւկնին

փողոց ձգած են, առանց ՚ի նկատի առնելու ատոր տխուր հետեանքները:

Կը յուսանք թէ մեր այս տուները բաւական կըլլան զգաւտացներու այդ օրիորդները. հակառակ պարագային, պիտի պարտաւորինք յականէ անուանէ նշաւակել զանոնք:

ՀԱՅԻ ԻՆ ԻՐԸ

Ալիւրի գիներուն բարձրանալը Եգիպտոսի մէջ ալ իր ազդեցութիւնը ունեցած է: Հոն հիմա 1 օխա հացը 3 զլուշէն 4 շրշի ելեր է:

Կ. Պոլսէն կը գրեն.

«Ալիւրի վաճառականները ապառիկ չեն տար հացագործներուն, որոնք այդ պատճառով իրենց յաճախորդները գոհացնելու անկարողութեան կը դատապարտուին: Աղքատ դասակարգը անտանելի վիճակի մէջ է. Շատ մը փուռերու առջև անկարողութիւններ պատահած են: Կառավարութիւնը յանձնաժողով մը կարգած է այդ կացութեան դարման մը գտնելու համար: Հացին գինը օր օրի վրայ կը դնէ:»

Հացի սղութեանը պատճառով Իտալիոյ շատ մը քաղաքներու մէջ պատահած խռովութիւնները պզտիկ բաներ չեն եղեր: Նաբօլիի փողոցներուն մէջ մարտկոցներ շինուելու թնդանօթներ զետեղուել են. թէ հոն և թէ Միլանի մէջ կանոնաւոր ճակատամարտներ տեղի ունեցեր են ժողովրդեան և զինուորներուն միջև: 300 հոգի մեռած և 1000 հոգիէն աւելի վիրաւորուած կան եղեր:

ԿԻՆԵՐՈՒ ՏԱՐԻՔԸ

Թէև հազուադիւր չեն էրիկմարդեր որոնք իրենց տարիքը ծածկելուն մէջ

մասնաւոր հաճոյք մը կը զգան, բայց այս տկարութիւն աւելի ընդհանուր է գեղեցիկ սեռին համար: Նիւ-Եօքի հըպատակութեանց դիւանի պաշտօնեան վերջերս բաւական դժուարին կացութեան մը մէջ գտնուեցաւ կնոյ մը հանդէպ որ եկած է Ամերիկեան հպատակութիւնն ընդունելու:

Վայելչապէս հագուած ու քուռուն տարեկանի մօտ այդ օտաշուհին իր անունը, մականունը յայտնելէ ետք, կատարի բարկութեան մը մատնուեցաւ, երբ պաշտօնեան հարցուց իրեն թէ «քանի տարեկան էք, տիկին»:

— Ի՜նչ, ինծի պէս յաշգելի կնոյ մը տարիքը հարցունե՞լ կը համարձակիս, լի՛րը, չի պիտի ըսեմ:

Ի զուր պաշտօնեան բարեկիրթ ոճով մը սկսաւ հափշտել տիկինը թէ այս ձեակերպութիւն անհրաժեշտ էր՝ հպատակութեան վկայականը յանձնուելու համար. կինը կը յաճառէր իր մերժման մէջ: Ճարահատած՝ դուրս ելաւ գրասենեակէն, քանի մը բարեկամներ գտնելու, որպէս զի իր կրած «անարգանքին» վրէժը գայլին լուծել պաշտօնեանէն: Նրբանցքին մէջ ոստիկանի մը հանդիպեցաւ որուն պատմեց դորժը:

— Ի՜նչ պատճառ ունիք տարիքնիդ ծածկելու, հարցուց մարդը պաղարիւնով:

— Տասնընօթը տարեկան հասակէս ի վեր Ամերիկայ կը գտնուիմ, պատասխանեց կինը, միշտ նոյն զայրացած չելոյով, ո՛չ մէկ մարդկային արարածի չեմ յայտնած տարիքս ու չի պիտի յայտնեմ բնաւ:

Եւ արդարեւ, նախամեծար սեպեց ամերիկեան հպատակութեանէն զրկուիլ քան թէ մեղանչել իր կնոջական արժանապատուութեանը դէմ:

ՆՈՒԷՐ

ԱՌՈՐ ԱՆԿ Է

«Ես քնարերգակ
եմ», ըսաց, լարեց
իր ձեռքին ջութակ
Ածել ըսկսեց.

Դուրս եկաւ վարնոց
ձանճի վըղտոց:

«Սոխակն եմ», ըսաց,
Գնքուշիկ վարդին
Թուփէն կրկնաց
Ու ինկաւ գետին:

Թուփը չը տարաւ
Այդ խոշոր ագռաւ:

«Երգիչն եմ», ըսաց
Շեշտով մը խոշոր,
ձվաց կամ պոռաց
Ու աշխարհ բոլոր

Լեցուց զոխնչով
Գոթոտի ճիւղով:

«Պուէտն եմ խանդոտ»
Ըսաց ու շարեց
Բառերն իրար մօտ,
Ու խուռնի վնտուեց:

Խուռնի՛ ի՞նչ տասն «ախ»ին
Ու քսան «վախ»ին:

«Ճարպիկ վիրահատ
եմ», ըսաց, մխեց
Իր սուրն ապիրատ
Մխեց, պահանջեց

Վարձք՝ ի՞նչ գահճային
Տխուր պաշտօնին:

Բերան մ'եմ», դռեց
«Մեղրածօր անուշ»
Կըծիկը քակեց
Խօսքերու ապուշ:

Ու մէյ մը հաղաց,
Մէյ մ'ալ փռնքտաց:

Յիմարն՝ ի՞նչ վարժոց
Լիրբ, ապերեսան
Մեծ սպանդանոց
Ըրաւ, ու մանկան

Արտիկը շամփրեց
Ու ծախու հանեց:

Ու դեռ կը ճվայ
Կակօս, թէ Մաղքոս.
Ու դեռ կը սողայ,
Խենդուկ թէ Միմոս.

Վարդեջուր քսուի
Ու գէշ կը հոտի:

ՆԱԼԲԱՆԴ

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ

Աժանս Բոժոժիկ և Ընկ:

Շիշթով

Հնախոյզները խաչագողի մը հետքերը
գտեր են: Կըսուի թէ աճուրդի պիտի գըր-
ուի խաչագողին . . . արժանիքը:

Պուրկաղ

Միութենականը Պուրկաղի անառիկ
երբդը գրաւեցին. Գաշնակցականը յետս
նահանջեցին. ա՛լ ժողովուրդը հանգիստ է
ու բիւրտերը պատժուեցան:

Ատրպատական

Սալմաստի յեղափոխական գործողու-
թիւնները ջատագովող տէնկերով նոր սու-
տեր ծածկայ հանուեցան գէպ ի ժշնէվ:

Լոնտոն

Մեծ պետին (աւաճ փառացս անցա-
ւորի) տանը մէջ խուզի աւարտասրի հաց-
կերոյթ մը տրուեցաւ իր հաւատարիմ . . .
բիսիկին:

Ալֆարականք ալ միթին մը կազմեցին.
Պիրաի տակառներուն շուրջը, Հրանտօ—Ար-
փարօ գորտամեկամարտութեան վրայ ծա-
ռախօսելու համար:

Յեղ. ասպարէզին մէջ երկու օրը անգամ մը
կարծիք փոխող քերիէ տիբլօմաթիքի Մ. Չե-
րաղի այն նշանաւոր յայտարարութեան վրայ
թէ «Գաշնակցութիւնը ահարկու կուսակցու-
թիւնն է», ֆասուլեաին գինը երկը բարձր
վրայ դրաւ:

Ժընէվ

Ժողովականաց բաղմութեան ծանրու-
թենէն գոնսղ-պիւրօին մէկ ոտքը կոտրե-
ցաւ. Կալացէն վարպետներ պիտի բերձեփ-
չինել տալու համար:

Մարտէլ

Մեր պատկառելի պետը իր առանձնարանը քաշուած, նոր ծրագիրը մը պատրաստելու վրայ է . . . իր եկամուտը շատցունելու համար :

Ռուսաստան

«Մարտիին ազգարարութեանը համեմատ, Սէսի կամ նէֆէսի գոգար պարոնը՝ աճելով մատուցներուն փակած երկու ոսկիները ապահով անձի մը յանձներ է . . . աւել տալու համար :

Աթէնք

Միութենական Սովթոմ քէրէյօսի կուսակցութիւնը կըսէ թէ, կուսակցութիւնները իրար բերելով միացնելու համար զանոնք էտրուրնի հնարած ելակտրական չուվանովը կապելու է :

Վառնա

Շէնք շնորհք հագուած պարոն մը անցած գիշեր պարսիկին սրճարանին մէջ, բովը նստող անձանցի մը վրայանէն թիւթիւնին բաքէթը համարածի ընելու ատենը օձիքը ձեռք տուաւ :

Ռուսճուգ

Պուետի մը մէկ գլուխ գործոցը տըպագրելու համար գրաշար մը կը փնտռուի, օրական երկու սայլանկէօզով փորը կշտացնելու չափ գոհացուցիչ վարձքով :

ՏԵՂԱԿԱՆ

ԵՐԿՈՒ ԸՆԿԵՐՆԵՐ

- Բարի լոյս կալաւ :
- Աստուծոյ բարին էօֆիւզ :
- Նէ՞ հապէր պէքէօր :
- Սուս պէ օթանմաղ, ագշամ կինէնէ՞ ետքը շարնը :
- Հիշ պէ, նէ՞ օլաճագ :
- Ագշամ կէնէ նէրտէ իրմէլէտինիդ :
- Պի՞ր աղ Զարաթօսթատա օթուրալդ, օրտան կիթտիք Արիսէ, օրտա քէօր քիւթիւկ օլտուգտան սօնրա սաաթ 1 տէ կէլ-

տիք Աճէմէ. ամա նէ՞ ճիւղիւղէր ետքալդ. կէօրմէլի իտին : Մ. . . տիւն եկնի մահլէտէն կէչէրքէն գըղը կէօրմիւշ վէ բէշինէ թագլմըշ, ֆագաթ աղա ամուճասը պիրտէն պիրէ գարշըսընա չըգտըղընտան, կէրի տէօնմիւշ : Մ. . . օ գըղա պաեա վուրուլմուշ, գըղը տա կէօրսէն նէ՞ անշախ շէյ ամա ագշամ չօղու օնուն լաֆը օլտու գաթլատըգ արթըգ կիւլմէքտէն :

— Ամա մասկարալար հա, կէչէն ագշամ տիւյիւնէ կիթտինի՞դ մի :

— Հը հըն, ամա տա օյնատըգ հա, գըղ տա օլտա ըտը : Ա. . . ութանմատան գըղը գալտըրտը, պէնտէ թամամ գալտըրաճագտըմ, չալկըլար տուրտուլար : Սօնրա 62 քիշի իլէ գատրիլ օյնատըգ :

— Տիւյիւնէ հէքսինիլ տէ տալէթլի՞ մի իտինիդ :

— Խայըր պէ, նէ՞ տալէթլի օլաճաղըղ, սաաթ Տտէ Ակօր կէլտի թօբլանտըգ, օրտան հէփսիմիդ պիրտէն կիթտիք. (Վառնա մէջ ամեն աղգէ երիտասարդներ առանց հրաւերի ամեն հարսնիքի մէջ պանիրի պընակներու պէս շարուած կը տեսնուին) :

— Պէն կիտէյօրըմ :

— Նէրէյէ պէքէօր :

— Սուս պէ գալագ աղաճը :

Ահա այս է կարգ մը պատանի—երիտասարդներու բարոյական ու մտաւորական պատկերը :

Չինվէնիօ

ՄԱՆՐ—ՄՈՒՆՐ

Սպասուհին (Տանտիրուհւոյն) — քանի՞ զաւակ ունիք, տիկին :

— Զաւակ չունիմ :

— Ուրեմն ես չեմ կրնար ձեր տանը մէջ աշխատիլ :

— Ինչո՞ւ :

— Որովհետեւ . . . բոլոր կոտորած թափուածին : պատասխանատուութիւնը իմ վրաս պիտի ծանրանայ :

Տիկին մը. — Ահ, միւսիւ տօգթօռ, սիրտս շատ կը նեղանայ փոր : Ի՞նչ ընեմ :

— Ատոր ճարը կայ. պտոյտի կելլէք :

— Ահ, ի՞նչ օգուտ. տմաւինս ալ հետ կուգայ . . . :

Վ Ի Զ Ա Կ

(Տեղեկագիր բոժոժիկի)

Համբարձման տօնին հինգիշարթի օրը ,
գաղթական խումբ մը տիկիներ ու օրիորդ-
ներ , ճորգ թաղը տան մը մէջ հաւաքուելով ,
ըստ սովորութեան՝ վիճակ հանեցին : Ամէն
մէկերնին չորեքշաբթի իրիկուն պղինձէ պաւ-
խաւի մը մէջ մէյմէ՛ն Նշան նետեցին , ող ,
մատնի , բանալի , մատնոց , ֆութբէթ , կո-
ճակ , քօշէի տակ , մէտալեօն , ակօւ մար-
բելու վրձին , բէշի պոլյունդի , նաղար պօն-
ճուխի , սոխ , սխտոր , բաժաթէղ , գրիչ , պա-
րապ մախառա , չոր պակլա , սիսեռ , լուբիա
կայլն կայլն , ու ամանին մէջ ջուր լեցնելէ
ետքը բերանը խոտերով ու ծաղիկներով ծած-
կեցին և գիշերը մինչև առաւօտ անաղը
ղրին : Հինգշաբթի օրը ժամը 9ին դարձեալ
նոյն տանը մէջ հաւաքուելով , երկու օրիորդ-
ներ ամենայն զգուշութեամբ և երկեղածու-
թեամբ պաւխաւը ձեռքի վրայ բարձր բռն-
նած , սենեակին մէջտեղը բերին դրին :

Անկիւնը նստող պառաններէն ճէօհէր
խաթունն ատենաւ բացաւ .

— Ա՛ղջիկներ , վեց օխտը տարու աղջիկ
մը ու ան պօյը մանչ մը բերեք հարսի փե-
սի պէս հագուեցուցէք :

— Զապէլ հանըմ , Մաննիկդ ո՛ւր է .

— Գուրսը Գառնիկին հետ կը խաղայ :

— Քանինճի՞դ է .

— Առջինեկս է . Գառնիկին խալ եաշաաշ :

— Հայտէ երկուքն ալ ներս կանչեցէք :

Այս հրամանը անմիջապէս կատարուե-
ցաւ . երկու պզտիկներէն աղջիկան դուրսը
թէլիէջէ մը կապեցին , մանչուն գլուխն ալ
սիւնի մը անցուցին ու պարխաճին առջև
բովէ քով նստեցուցին :

— Հիմա ինձի նայեցէք , ամեն մէկ վի-
ճակը ըսուելուն՝ հարսը պիտոր ծոխ մէջէն
պան մը հանէ ու փեսին ծառքը տոյ , ան
ալ տիրոջը թէսիմ պիտի ընէ :

— Հայտէ , հալը՞ր էք , պաշայներ պիտի .

— Տահա մի՛ պաշայէք , մայրիկս ալ

գայ . բախլայով միսին աղ ղնելու գնաց :

Ու հինգ վայրկեանէն ամեն բան կազմ
և պատրաստ էր . ճէօհէր խաթուն երեք ան-
գամ՝ երեսը խաչակնքելէ ետքը սէպէպլի բեր-
նով վիճակը սկսաւ .

— Պարի լուս ծեղ :

— Հանէ աղջիկս հանէ .

Բանալի մը ելաւ :

— Այ բանիքը ժամուն նիյէթովը դը-
րեր էինք , ինչալլահ ամենուս ալ սրտին մու-
րատը կուտայ :

— Հրամմէ նայինք Դեղգիկ հանըմ ,
չէքէր մը ծամէ , դուն աղւոր վիճակ գիտես .

— Քա իրաւոր մոոցեր կամ :

— Ի՛նչ տար մոռնաս նէ՛ կէնէ միտքդ
կուգայ . հայտէ նայինք :

— Կէքտէն զէնպիլ էնիյօր ,

Ֆըրլ ֆըրլ տէօնիյօր .

Գայտէ էլմէ կիւղէլ գըղըմ ,

Գըսմէթին վար կէլիյօր :

— Հանէ հարսնուկս , հանէ .

Սխտոր մը ելաւ :

— Քա առ ո՞վ է .

— Մեր օրիորդին համար դրած էինք :

— Հէմէն տարէք քիթէն կախեցէք :

— Ուղուն սըն սըռք կիպի ,

Էքշի սին Կօռուգ կիպի ,

— Նէ՛ սէրսէֆիլ կէղէրսին

Հաշըրմըլ թափուգ կիպի :

Կօճակ մը ելաւ :

— Էյ տասնկ ալ թամ՝ վրան ելլալը
չէի տեսեր , Աղանին է , սա ո՛ւր է գիշեր-
ները տիյօր լուս պախճան կը պատի :

— Մէրտիվէնիմ գըրգ տեադ ,

Գըրգընա վէրտիմ տայագ .

Եար գաբուեա կէլիրսէ

Նէ՛ էլ թուլթար նէ՛ տեադ :

Ֆուռքէթ մը ելաւ :

— Իմինս է :

— Վա՛յ օրիորդ Եղսաբերթ , եար գա-
բույա կէլիրսէ , հէ՛ :

— Ան տեղունքը գործ չունենալու գու-
ալ գիտէք :

— Գիտենք կոր . վրաս գրէ :

— Մայրիկ , հա հայերէն պիտի ըսեմ .

— Ըսէ եափրում , ըսէ .

— Թէ գահիճ ես , իմացուր ,

Քու սիրոյդ զո՛հ կը լինիմ .

Իսկ թէ մերժես իմ սէրը ,

Որո՞ւ համար ես ապրիմ :

— Հանէ աղջիկս, հանէ:
 Մատնոց մը ելաւ:
 — Օրիորդ Աշխէնին մատնոցն է:
 — Հիշ վրաս չելաւ ամա՛նէ իսէ:
 — Հուշան խաթուն, հատ մ'ալ դու ըսէ:
 — Չաղանօզ կիպի կիտերիմ՝ եան եան,
 Սույա սապօնա հիչ գարըշամամ:
 Խաթըրշինասըմ, քէն նէ՛ տիր պիլմէմ,
 Չօգ տէֆա հագկը քէթմ իտերիմ պէն:
 Նազար պօնճուխի մը ելաւ:
 — Քա ագ որի՞ համար էր:
 — Իրաւունքին:
 — Հէմէն տարէք տուէք քի վրան պա-
 ճէ. նազարի համար բէք աղէկ է:
 — Քէվրան կէչէր օլուր իզ:
 Ա'խ, վա'խ, օֆ, էսէֆէնկիզ,
 Ա'սլա թաթլը սէօյլէմէզ,
 Հէր սէօղիւ տիր պիրէր պիզ:
 Սոխ մը ելաւ,
 — Տաւրոսն է. վո'ւյ հոգի. կրածնե-
 րն ալ բիւթիւն սօխի պէս կծու բաներ են.
 վա՛յ ուտողին կլիուն:
 — Հողեր խաթուն, դուն ալ հատ մը ըսէ:
 — Էօմրիւմտէ պիլմէմ տուր օթուր նէ՞ տիր,
 Սալլանմագ պանա հագտան վէրկի տիր.
 Հէր իւրիւղկեարա պօյուն էրէրիմ,
 Եալընըզ քէնտիմէ պէն պէյէնիւրիմ:
 Քէչի պոյնուզի մը ելաւ.
 — Կուտերը մէջը կերերան կոր.
 — Քա սա ո'վ է.
 — Հարժումն է.
 — Հարժի պիլէքիմ, գիտնօ հտլովը չէ:
 — Օրիորդ Զապէ'լ, հայտէ դուն ալ ըսէ:
 — Գեղեցիկ համբաւ ունիս
 Գրաւիչ լեզու ունիս,
 Բայց յարգելի չեն ատոնք
 Զի շատ սիրողներ ունիս.
 Պզտիկ մատիդ մը ելաւ:
 — Օրիորդ Իսկուհին է, իրեն մի՛ ը-
 սէք, կը կոտորուի. չինքն բէք թըպիւրսն ելաւ:
 — Քա ո'ր Իսկուհին է ագ.
 — Ուր է սիրողին մէկն ալ էվրօրա
 գնաց. հէքիմ պիտի ըլլայ:
 — Հայտէ՛ Հաղիկ, դուն ալ ըսէ.
 — Չեմ սիրեր նարինջ խնձոր.
 Արդէն ունիմ քաղցրիկ նուշ,
 Պարապ տեղը մի՛ յոգնիր,
 Քեզ չեմ սիրեր էյ ապուշ:
 Մէտալիօն մը ելաւ.
 — Էօթէնին է. էյ բերանդ պագնեմ

Հաղիք, հօրդ անունը Մարգար ըլլար նէ՛
 մարգարէի աղջիկ ես պիտի ըսէի. սասնկ ալ
 թըպիւր թըպիւր յին վրան էլլա՛լ:

Պառաւ մը. — Այ օղուլ, ինչ շաշմիշ
 կըլլաք կոր. սա վիճակները բիւթիւն եղած
 բաներ են. սէօյլէնէ պագմա՛ սէօյլէթէնէ
 պագ կըսէր տալոջս կեսուրը:

— Սէնի՛ տանա պէն կէօթէրիյօրմ,
 Չիրքինկիղինի պիլտիրիյօրմ.

Ա՛հ, նի՛շիւն պէնի տիւշմէն սանըրսըն,
 Կիւղէլ օլմանը պէն իստէյօրմ:

Գրօշէի ասեղ մը ելաւ:

— Հայելին է:

— Վո'ւյ տա՛վոր լախըստըն մ'ընէք.
 սընըրներուս կը դպչի. 40 տարին հեղ մը
 կերակուրով բաղնիք էրթալնիս ու վոնտուել-
 նիս պիլէ գրեց:

— Մեր օրիորդին ալ դէմ գրեց, ա-
 նանկ որ օրիորդը բարկացաւ և բիթին ծայ-
 րը տօլամա հանեց:

— Քուրուկ, այնա մը աւեր օրթան
 ինկեր է. հալխուն չիրքինութիւնը կը ցուցնէ.

— Է այնա ըսած բանդ չիրքինը կըր-
 նա՞յ աղւորցունել. աղւորը՝ աղւոր, չիրքինը՝
 չիրքին կը ցուցնէ. դուք չիրքին էք տէյի
 այնան ինչ խապահաթ կը գտնաք կոր:

Այս միջոցին պզտիկ միտան անհան-
 գստութենէն ոտքի ելած ատեն յիւրախա-
 ճիւն վրայ ինկաւ կործանեց զայն, որուն
 մէջի մնացած պարունակութիւնը թափեցաւ,
 որով վիճակին ալ թըլըսըմը աւրուեցաւ և
 հաւաքւողները իրենց տեղերը ցրուեցան:

ԵՆՆԻ՛, ԵՆՆԻ՛, ԵՆՆԻ՛.

Բերշէնպէ ագշամը Վառնատա՝ Եննի թիւրք-
 ճէդ գումբանեա թարափընտան պիր լուպիյաթ
 իճրա օլունմուշտըր: Օյուն՝ իլան մուճիպինճէ
 «Օտուն գըլըճ» գոմէտիսի օլտուղընտան, տրամ
 տախի «Օտուն քէսէր լավաղան»^{օ. օ.} նամըյլա
 քիմսէնին խէյալինտէն կէչմէտիզի պիր շէյ իմիշ:
 Քէզալիք «Պիր տրամ՝ Հօգգապաղ բրօվա օ-
 լունմուշտըր»: Թամա հքեարլըղը պէրթարաֆ
 էտիպ 49 տրամ զամմ իտէրէք 50 տիրէմէ
 տօլտըրմուշտ օլսայըտըլար տահա էյի օլմա՞ղ
 մը իտի: Մէսմուաթա կէօրէ, կէլէճէք հաֆ-
 թա տա՝ «Տէմիր քէսէր հափուլ» նամըյլա 3
 բէրտէլի վէ 4 չէրչիվէլի պիր օյուն իճրա օ-
 լունաճագ ըմըշ:

Մուպֆֆապիյէթ. . . :

ԱԶԴ

Տ Պ Ա Ր Ա Ն

ՀԱՅԵԼԻ

ՀԱՆԴԵՍԻ

Ամէն լեզուէ հրատարակութիւնք:

Այցեատմս, հասցէտմս, նտմակա-
գլուխ, հրաւիրատմս, բարենիշ. տոմ-
սակ եայլն եայլն թէ՛ պարզ և թէ
ոսկեզօծեալ մէկ քանի գոյներով կը տը-
պագրուին: Քաղաքներէ եկած յանձ-
նարարութիւնք փութով կը կատարուին:
Գին գոհացուցիչ: Դիմել Հայելիի խմբ-
բագրութեան:



ՔԱՇԱՐԱՆ ԵՒ ԶԲՈՍԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԻԻՓԵՆԿԻՃԵԱՆ և ԸՆԿ.

Հաճի Բանաբօին ճիշդ դէմը

Արհեստին մէջ կատարելութեան հա-
սած երիտասարդ հայու մը ձեռամբ սարքուած
այս հովատուն, մաքուր ու գեղջական հաստա-
տութիւն ոչ միայն պատիւ կը կը բերէ հայ
ճաշակին, այլ և մեծ խթան մը կը լլայ որ
հայ ու օտար փափկակերներ իրենց գարնա-
նային ու ամառնային ժամադրաւայր մը ը-
նեն զայն զբօսնելու ու ճաշելու:

Հարսանեաց և խնձօքներու սպաննե-
ր ալ կը գտնուին, որոնք զիւրաժատչի գի-
ներով վարձու կը տրուին: 3

ՆՈՐ ՀՐԱՏԱՐ ԿՈՒԹԻՒՆ

ԻՐԲԵՅԻՆ ՖԷՆՏԻ

ԳԱՐԸՅԸ ԵՒՆՏԻ

Գըշ կէսէլէրինէ մախսուս զայէթ կիւ-
իւնճի վէ էյլէնճէլի իշպու գօմէտի 32 սա-

հիֆէտէն իպարէթ օլուպ, հրուֆաթը էրմէ-
նճէ իվէ լիսանը թիւրքճէ օլարագ վարնասա
թիւթիւնճիւ տիւքքեանլարընտա 30 սանթիմ
ֆիաթլէ սաթըլմագտա տըր: Թաշալարտան
լաթէյէնլէր եալընըզ 30 սանթիւլիք բօսթա
բուլը զիւրտէ մուհարրէր նամըմա կէօնտէր-
մէլի տիրլէր,

Մ. ԽԱԶԻԿԵԱՆ, 2 նճի Ուշասթ, 1104

Վ.Ա.Ռ.Ն.Ա.

Պունտան պէօյլէ սաիր էյլէնճէլի վէ ֆա-
լաէլի գօմէտիլէր տախի բէյաէրբէյ նէշը օ-
լունաճաղը պէյան օլունըր:



ԳՈՒՇԱԿ

Ո.Պ.Ա.Գ.Ա.Յ.Ի

Կամ Զուարճալի Բաղդադոյց
Ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըզ-
բօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը
ծախուի մէկ ֆրանքի, թղթատարի ծախքով.
Դիմել մտր խմբագրութեան:

ԵՐԳԱՐԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ

ԿԱՄ

ԴԱՄԱԳԻՐԲ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏՍ

ՓՈԲԻԿ ՏՂԱՅՈՅ

Այս երգարանը, իր տեսակին մէջ առա-
ջինն է որ լոյս կը տեսնէ հայերէն լեզուով,
կը պարունակէ մանկական գուարճալի երգեր
ու քանի մը ոտանաւոր առակներ և կրնայ
երախայնորուն ծառայել նաեւ իւր ընթեր-
ցանութեան գիրք որուն պարունակութիւնը
եքօնցուցիչ և հրահանգիչ է միանգամայն
անոնց համար:

Թուղթը ընտիր է, տպագրութիւնը՝ մա-
քուր և կազմը վայելուչ:

Գին 80 ՍՍՆԹԻՄ

Կեդրոն. Վառնա, Արեւելեան տպարան,
2րդ. թաղ, թիւ 1104:

Отговоренъ редакторъ: Н. Драгулев

Печатница "Взаимность"—Варна.